ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 16

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորատի 04.06.2019թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 15 (տասնհինգ) անդամից 12-ը (տասներկուսը):

Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ
2. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
3. Վ. Խաչատրյան՝ արհեստակցական կազմակերպության նախագահ,
4. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հա
շվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
5. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
6. Թ. Խաչատրյան՝ գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն,
7. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն
8. Բ. Պողոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
9. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
10. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
11. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
12. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

Նկատի ունենալով օրակարգային հարցը նիստին մասնակցում էր նաև պատմության և փիլիսոփայության ամբիոնի վարիչ Հ. Խորիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրով պատմություն 2-րդ կուրսի հայոց պատմություն-4 առարկայի քննության հարցի լուծման մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան

2. Հանրապետական գիտաժողովի անցկացման մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

ԼՍԵՑԻՆ՝

Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրով պատմություն 2-րդ կուրսի հայոց պատմություն-4 առարկայի քննության հարցի լուծման մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրով պատմություն 2-րդ կուրսի ուսանողների և հայոց պատմություն-4 առարկան դասավանդող դասախոս Վարդիթեր Աբրահամյանի միջև ծագած կոնֆլիկտին վերաբերող հարցի լուծման նպատակով արտահերթ որոշում են կայացնելու, քանի որ թիվ 15 ռեկտորատի որոշումը նորից վերանայման կարիք ունի ուսանողների դասի չներկայանալու պատճառով: Պարոն Սերոբյանը առաջարկեց հայոց պատմություն-4 առարկայի քննությունը հունիսի 7-ից տեղափոխել հունիսի 28 և այդ ժամանակահատվածում լրացնել բաց թողնված դասաժամերը, որպեսզի ուսանողները ժամանակ ունենան յուրացնելու համապատասխան դասընթացը և պատրաստվեն ամփոփիչ քննությանը: Ֆակուլտետի դեկանին ու ամբիոնի վարիչին հանձնարարվում է կազմակերպել դասապրոցեսը, իսկ քննության անցկացման համար կազմել հանձնաժողով:

Բ. Պողոսյանին հետաքրքրում էր, թե արդյո՞ք ուսանողները կգան դասապրոցեսին, քանի որ նախորդ ռեկտորատի որոշումը այսօր վերանայման կարիք ունի:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ այս ամենը բխում է ուսանողների շահերից և եթե ուսանողները չմասնակցեն դասապրոցեսին և քննությանը, ապա 0 են ստանալու, եթե դասախոսը հրաժարվի պարապել՝ նկատողություն կստանա, եթե դեկանը կամ ամբիոնի վարիչը այս առումով իրենց պարտականությունները չկատարեն, դարձյալ նկատողություն կստանան:

Պարոն Խորիկյանը ներկայացրեց, որ իրենք ամբիոնի որոշում ունեն, որով նախատեսված է յուրաքանչյուր միջանկյալի համար հարցաշարի հարցերը կազմել 12-24 հարցից, ապա շարունակեց, որ առաջին միջանկյալը տեղի չի ունեցել կոնֆլիկտի պատճառով, երկրորդը հիմա պետք է իրականացվի և հարց ուղղեց,- այսինքն հարցաշարը 48 հա՞րց պետք է ընդգրկի:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ ինքը մասնագետ չէ, դրա համար մասնագիտական ամբիոն է գործում և ինքը գտնում է, որ ճիշտ կլինի 24, 24-ական հարցեր լինեն և այդ ծավալն ամբողջությամբ ընդգրկվի՝ դառնալով միացյալ քննություն:

Պարոն Խորիկյանը նկատեց, որ ուսանողները փետրվարից մարտ պարապել են և հիմա արագացված դասընթացը լրացնելուց հետո այդքան ժամանակ չեն ունենա, որ պարապեն ու հանձնեն քննությունը:

Պարոն Սերոբյանը հարցով դիմեց պարոն Խորիկյանին,- ի՞նչ եք առաջարկում, քննությունը տեղափոխել սեպտեմբերի՞ն:

Պարոն Խորիկյանը պատասխանեց, որ դա ռեկտորատի որոշման հարցն է: Պարոն Սերոբյանը նկատեց, որ ո՛չ, սեպտեմբեր չենք կարող տեղափոխել, քննությունը պետք է ավարտել այս կիսամյակով:

Ապա Պարոն Սերոբյանը շարունակեց, որ այս իրավիճակից ինքը ուրիշ ելք չի տեսնում, ռեկտորատը որոշում կկայացնի և բոլոր կողմերը իրենց վերաբերվող մասով պետք է ապահովեն որոշման կատարումը: Իր սկզբունքը մինչև այսօր եղել է հնարավորինս քիչ գնալ կոշտ ճանապարհով, կիրառել վարչական լծակներ, հիմա ներկայացնում է իմ առաջարկները, եթե կան այլ առաջարկներ ապա սա դնել քննարկման:

Վ. Խաչատրյանը ասաց, որ ինքը այլ առաջարկ չունի, սակայն ուզում է իմանալ, թե ինչու՞ ուսանողները կարող են չգալ կամ ինչու՞ դասախոսը կարող է չպարապել այս դասընթացը:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ ինքը ուղղակի քննարկում է տարբերակները, առանց մեկնաբանումների, մինչև այսօր չի եկել ուսանողը, հնարավոր է, որ ուսանողների էլ, դասախոսի կողմից էլ այս որոշումն իրագործվի և վերջապես պրոբլեմը լուծվի:

Այնուհետև **պարոն Խաչատրյանը** հարցրեց, թե դասախոս Աբրահամյանը այդ ժամերին եկե՞լ է դասի:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ դասախոս Աբրահամյանը այդ ժամերը չի պարապել, քանի որ ուսանողները դասի չեն եկել և իր կողմից աշխատանք չի կատարվել:

Պարոն Խաչատրյանը շարունակեց, թե արդյո՞ք դասախոսը վճարվել է և ստացվում է, որ ուսանողի պատճառով դասախոսը չի պարապել դասերը, ինքը ուզում է սա հասկանալ:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ հիմա ֆինանսական հարցի պահը չեն քննարկում, սակայն պարոն Խաչատրյանը հակադարձեց, որ հարց է առաջանում, թե դասախոսի մեղքը ո՞րն է, երբ ինքը մտել է լսարան պարապելու, բայց ուսանողները դասի չեն եկել և հիմա հնարավոր է, որ դասախոսը պարապելու համար լրացուցիչ վճար պահանջի և դա պետք է ճշտել:

Պարոն Սերոբյանը նշեց, որ դասախոսն այդ օրերին բոլոր ուսանողներին մատյանում բացակա է դրել:

Պարոն Վ. Խաչատրյանը նորից հարցադրում կատարեց, եթե դասախոսը հրաժարվի առանց լրացուցիչ վարձատրության դասապրոցեսը պարապել, ապա ի՞նչ է լինելու:

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ կա իրավիճակ. կուրսի կողմից կա դժգոհություն դասախոսից և որոշում կայացնելիս հարցին նայում են տարբեր տեսանկյուններով, դասախոսը չի պարապել և հիմա արագացված կուրսը անցկացնելու համար չի վճարվելու, եթե դասախոսը գտնի, որ առանց լրացուցիչ վճարման չի պարապելու, ապա ամբողջ պատասխանատվությունը կընկնի դասախոսի վրա:

Վ. Խաչատրյանը հարցրեց, եթե Աբրահամյանը չի գալիս և այլ դասախոս է իրականացնում աշխատանքը նա վճարվելու՞ է, թե ոչ:

Պարոն Սերոբյանը նշեց, որ այո՛, պետք է վճարվի, բայց Աբրահամյանից էլ պետք է հետ պահվի աշխատավարձից այն չափով, որով աշխատանքը չի կատարվել, քանի որ դա է օրենքով նախատեսված, ապա դիմեց բուհի գլխավոր հաշվապահ պարոն Քալաջյանին, թե ի՞նչ կարծիքի է այս առումով:

Պարոն Քալաջյանը պատասխանեց, որ եթե խորն ենք նայում երևույթին, ըստ աշխատանքային օրեսգրքի դասախոսը ներկայացել է աշխատանքի ժամանակին և աշխատանքով չի ապահովվում, համարվում է հարկադիր պարապուրդ, այսինքն գործատուն պետք է վճարի պարապուրդի դիմաց, սակայն տվյալ պարագայում այլ կարծիք կարող է լինել, որ ուսանողները չեն ներկայացել քանի որ դժգոհ են եղել դասախոսից, այսինքն չի եղել աշխատանքային պայմանն ապահովելու հնարավորություն:

Պարոն Խորիկյանը հավելեց, որ հայոց պատմության դասերը դրված են եղել երկուշաբթի և չորեքշաբթի 1-2 ժամերին, շատ դեպքերում տիկին Աբրահամյանն իր ժամերին ներկա բացակա չի արել և դա կատարել է ավելի ուշ, ժամը ֆիքսված է: **Պարոն Սերոբյանը** ասաց, որ ինքը չի ուզում նորից պատճառների մեջ խորանալ, քանի որ դա տանելու է նորից բանավեճերի, ելնելով իրավիճակից ինքը հստակ առաջարկներ է ներկայացնում և խնդրում է քննարկել դրանք, խնդիրը պետք է լուծել:

Ապա նրա կողմից շարունակվեց, որ միգուցե ադմինիստրատիվ միջոցներ իր կողմից

պետք էր ձեռնարկել ավելի վաղ, սակայն ինքը փորձել է հարթել իրավիճակը, բոլոր կողմերի հետ հանդիպելով, զրուցելով, որպեսզի անցնցում, որևէ մի կողմին նսեմացնելու կամ վիրավորելու, տուժողի կարգավիճակում չհայտնվելու իրավիճակ չառաջանա, սակայն հիմա իր առաջարկած տարբերակը բոլորին հնարավորություն է տալիս քայլ ընդառաջ անելու խնդիրը լուծելու համար: Եթե որևէ մի կողմը կհրաժարվի սա կատարելուց, թող պատասխան տա, կկիրառվի օրենքի տառը:

Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան **Օֆ. Հովհաննիսյանի** կողմից առաջարկվեց մեկ շաբաթ ևս հետաձգել քննությունը և նշանակել ս/թ.-ի հուլիսի 4-ին:

Պարոն Սերոբյանը նշեց, որ ինքը խնդիր չի տեսնում:

Ն. Ավետիսյանը նկատեց, որ մատյանում ուսանողների բացակայությունները ֆիքսված են:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ պետք է ֆիքսել, որ եղել է ֆորս-մաժորային իրավիճակ և բացակայությունները չպետք է հաշվել ուսանողներին գնահատելիս:

Օֆ. Հովհաննիսյանը նկատեց, հատկապես որ, ըստ պարոն Խորիկյանի, բացակաները դասախոսի կողմից դրվել են դասից հետո:

Պարոն Սերոբյանը առաջարկեց հանձնաժողովը կազմել դեկանից, քննող դասախոսից և ամբիոնի վարիչից:

Պարոն Խորիկյանն առաջարկեց, որ գնահատելու համար ևս մեկ մասնագետ լինի, այսինքն գնահատեն երեք մասնագետով, սակայն դժվարացավ այս պահին ամբիոնի որևէ մասնագետի անուն տալ, ասելով, որ այս առարկայի հարակից մասնագետները երկուսն են ամբիոնում, սակայն ինքը չի կարող առանց նրանց հետ խոսելու, անուններ տալ:

Պարոն Սերոբյանը հանձնարարեց պարոն Խորիկյանին մեկ օրվա ընթացքում հանձնաժողովի 3-րդ անդամին առաջարկելու համար ամբիոնի մասնագետների հետ զրուցել և ներկայացնել նրան:

Պարոն Խորիկյանը դիտարկում կատարեց, որ առարկայի դասաժամերը 32-ն են և դա պետք է պահպանել:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ համապատասխան ժամանակացույցի կազմման և դասապրոցեսի կազմակերպման հարցերի համար հանձնարարական է տրվում դեկանին, դասապրոցեսի վերահսկողությունը իրականացնելու համար՝ ամբիոնի վարիչին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրով պատմություն 2-րդ կուրսի «Հայոց պատմություն»-4 առարկայի քննությունը ս/թ.-ի հունիսի 7-ից տեղափոխել հուլիսի 4-ին՝ նկատի ունենալով ուսանողների և դասախոսի միջև եղած առկա իրավիճակային խնդիրները:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

12 անդամ. կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2 (Ա. Սարգսյան, Թ. Խաչատրյան):

2. Նկատի ունենալով, որ վերոգրյալ խնդրի իրողությամբ պայմանավորված՝ «Հայոց պատմություն»-4 առարկայի դասաժամերը չեն լրացվել, հանձնարարել ֆակուլտետի դեկանին, ամբիոնի վարիչին ուսանողների հետ քննարկման արդյունքում կազմել ժամանակացույց՝ դասապրոցեսը մինչև ս/թ.-ի հունիսի 29-ը ներառյալ կազմակերպելու նպատակով (ժամանակացույցը ներկայացնել ռեկտորի ԺՊ-ին մինչը 06.06.2019թ.-ի 16.00-ն):
Հանձնարարել ֆակուլտետի դեկանին, ամբիոնի վարիչին իրականացնելու դասապրոցեսի վերահսկողությունը:

3. «Հայոց պատմություն»-4 առարկայի քննությունն անցկացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝

Օֆելյա Հովհաննիսյան - Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան

հանձնաժողովի անդամներ՝

1. Հովհաննես Խորիկյան- պատմության և փիլիսոփայության ամբիոնի վարիչ,
2. Վարդիթեր Աբրահամյան- քննող դասախոս.
3. Համապատասխան մասնագետ՝ ամբիոնի ներկայացմամբ:

Հանձնաժողովի անդամներն ունեն գնահատելու իրավունք:
Ուսանողների վերջնական գնահատականը նշանակվում է հանձնաժողովի անդամների միջին գնահատականի հիման վրա:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

12 անդամ. կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1 (Թ. Խաչատրյան):

ԼՍԵՑԻՆ՝

Հանրապետական գիտաժողովի անցկացման մասին

Ա. Սարգսյանը ներկայացրեց, որ համալսարանի 85-ամյա հոբելյանին նվիրված նախատեսված է կազմակերպել հանրապետական գիտաժողով և քննարկման արդյունքում նախատեսել ենք այն կազմակերպել նոյեմբերի 8, 9-ին և օրերը հաստատելուց հետո հայտարարությունը հրապարակել:

Ա. Սարգսյանը ներկայացրեց նաև, որ գիտաժողովի տպագրվող նյութերը գիտական խորհրդում հաստատելու անհրաժեշտություն կա, որպեսզի ասպիրանտների համար դժվարություններ չստեղծվեն, քանի որ գիտական խորհրդի հաստատման դեպքում ԲՈԿ-ը կընդունի այդ հոդվածները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Համալսարանի 85-ամյա հոբելյանին նվիրված հանրապետական գիտաժողովը անցկացնել ս/թ.-ի նոյեմբերի 8 -ին , 9-ին և հրապարակել հայտարարությունը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

12 անդամ. կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Ռեկտորի խորհրդական՝	Ս. Շահպարոնյան
Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան
Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն	Ն. Ավետիսյան
Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան՝	Բ. Պողոսյան
Հումանիտար գիտությունների և	

արվեստի ֆակուլտետի դեկան՝	Թ. Մելիքյան
Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝	Ռ. Մարդոյան
Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝	Օ. Հովհաննիսյան
Ռազմական ամբիոնի պետ՝	Ա. Մկրտչյան
Անձն.կառ.նիրավ.ապահովման բաժնի վարիչ՝	Ա. Հովհաննիսյան